## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ու Մ
14. 03. 2024 թվականի N 22

## ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-113-0011-0004 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 08.04.2004թ. թիվ 443-Ն որոշմամբ, Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 31-րդ հոդվածով, հիմք ընդունելով որակավորված չափագրող «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից չափագրված հատակագիծը

որոշում եմ՝

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում ընդգրկված ՀՀ կառավարության 08.04.2004թ. թիվ 443-Ն որոշմամբ համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0011-0004 ծածկագրից առանձնացված 0.016 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության այլ գործառնական հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի և տրամադրել համայնքային սեփականության վկայական:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3. Հայաստանի Հանրապետության Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող 06-113-0011-0004 ծածկագրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Ֆիոլետովո համայնք, 1-ին փողոց, 2/1 հողամաս:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15.03.2024 թվականի N 23-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող 06-113-0007-0003 ծածկագրից առանձնացված բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Ֆիոլետովո համայնք, 2-րդ փողոց, 366/1 հողամաս:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ՉԻՉՅՈՎ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18.03.2024թ. թվականի N 24

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ և ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածով, հաշվի առնելով Վերա Ցիկինա /Յուրտաևա/ Վլադիմիրովնայի և Սվետլանա Յուրտաևա Վլադիմիրովնայի համաձայնագիրը, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 35-րդ հոդվածը.

***որոշում եմ***

1. Ֆիոլետովո համայնքում գտնվող 06-113-0158-0079 ծածկագրով 0.0605 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարքը սեփականության վկայական N 1712961 անշարժ գույքի նկատմամբ տալ իրավունքի դադարման պետական գրանցում և գրանցված իրավունքի պետական գրանցումը ճանաչել ուժը կորցրած::

2. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՉԻՉՅՈՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19.03.2024 թվականի N 25

## ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, "Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին" 2019 թվականի նոյեմբերի 19-ին ՀՕ-225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ին N 912-Ն որոշումով հաստատված կարգի, 8-րդ, 9-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի բ) ենթակետով, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Պավել Վասիլի Մորոզով /ծնվ՝ 22.10.1960թ./, Տատյանա Յակովլևնա Մորոզովա /ծնվ՝ 03.09.1957թ./, Ֆեդոսյա Պավլովնա Բլոխինովա /ծնվ՝ 26.11.1983թ./, Լյուբով Պավլովնա Միխայլովա /ծնվ՝ 20.04.1986թ./, Վասիլի Պավլովիչ Մորոզով /ծնվ՝ 23.12.1987թ./, Տատյանա Պավլովնա Նովիկովա /ծնվ՝ 03.01.1991թ./, Գալինա Պավելի Չիչյովա /ծնվ՝ 01.05.1997թ./, Յակով Պավելի Մորոզով /ծնվ՝ 20.04.1996թ./, դիմումները և սեփականության իրավունքի թիվ 905386 համարի վկայականը և չափագրման 2023UDNVSR 23.12.2023թ. մուտքագրման ծածկագրով տեղեկանքը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ,գ ենթակետով և 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրնականացնել Ֆիոլետովո, համայնքում գտնվող Վասիլի Պավել Մորոզով /ծնվ՝ 22.10.1960թ./, Տատյանա Յակովլևնա Մորոզովա /ծնվ՝ 03.09.1957թ./, Ֆեդոսյա Պավլովնա Բլոխինովա /ծնվ՝ 26.11.1983թ./, Լյուբով Պավլովնա Միխայլովա /ծնվ՝ 20.04.1986թ./, Վասիլի Պավլովիչ Մորոզով /ծնվ՝ 23.12.1987թ./, Լյուբով Իվանովնա Մորոզովա /ծնվ՝ 1926թ./, Տատյանա Պավլովնա Նովիկովա /ծնվ՝ 03.01.1991թ./, Գալինա Պավելի Չիչյովա /ծնվ՝ 01.05.1997թ./, Յակով Պավելի Մորոզով /ծնվ՝ 20.04.1996թ./ համասեփականության իրավունքով պատկանող 06-113-0007-0005 կադաստրային ծածկագրով 0,097 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված այլ անձանց իրավունքներին ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց

քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և սերվիտուտի իրավունք չառաջացնող, 2002թ-ին կառուցված 42.07 քմ. արտաքին մակերեսով խոհանոցը և 2015թ-ին կառուցված 58.2 քմ. արտաքին մակերեսով ծածկը:

2. Պարտավորեցնել համասեփականատերերին՝ համայնքին /հաշվեհամար՝ 900235003895 ինքնակամ կառույցի օրինականացում/ վճարել 2010թ-ին կառուցված 42.07 քմ. արտաքին մակերեսով խոհանոցի օրինականացման վճարը՝ 25950 ՀՀ դրամ /քսանհինգ հազար ինը հարյուր հիսուն դրամ/ , 2010թ-ին կառուցված 58.2 քմ. արտաքին մակերեսով ծածկի օրինականացման վճար՝ 35900 դրամ /երեսունհինգ հազար ինը հարյուր ՀՀ դրամ/:

3. 06-113-0007-0005 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Լոռու մարզ գյուղ Ֆիոլետովո, 2-րդ փողոց, 368 բնակելի տուն հասցե:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՉԻՉՅՈՎ